Մայիսի 26-ին հանրապետության հիմնական դպրոցների շրջանավարտներն ավարտական կենտրոնացված քննություն են հանձնելու հայոց լեզվից: Կենտրոնացված քննությունը շրջանավարտները հանձնելու են Գնահատման և թեստավորման կենտրոնի հաստատած քննական կենտրոններում: ԳԹԿ-ն հոկտեմբեր-նոյեմբերից սկսած ուսումնասիրություններ է արել մարզերում՝ կենտրոնների ձևավորման ուղղությամբ: Չափանիշները հետևյալն են՝ կենտրոնները պետք է տարածքի բնակավայրերից հարմար հեռավորության վրա գտնվեն, լինեն բարեկարգ և ունենան անհրաժեշտ պայմաններ՝ քննությունները կազմակերպելու համար: Առաջիկա օրերին հայտնի կլինի դրանց ստույգ թիվը և գտնվելու վայրը: Առայժմ հայտնի է, որ քննական կենտրոնները շուրջ 250-ն են լինելու, որոնց 1/3-ը մայրաքաղաքում է լինելու, իսկ 2/3-ը մարզերում: 9-րդ դասարանի ավարտական և կենտրոնացված քննություն հանձնողների դիմում հայտերը և ցուցակ-հայտերը հաստատության տնօրեններն արդեն լրացրել և ԳԹԿ են փոխանցել, և այս օրերին վերջնական ճշգրտման փուլն է: Ի տարբերություն 12-րդ դասարանցիների, 9-րդ դասարանցիները բոլորն են հանձնում այս քննությունը՝ բացառությամբ կրթության առանձնատուկ պայմանների կարիք՝ մտավոր հետամնացություն ունեցող սովորողների, որոնք ազատվում են ավարտական քննություններից: Նրանց տրվելու է ավարտական վկայական՝ առանց քննական գնահատականների: /http://www.irtek.am/views/act.aspx?aid=65827, կետ 9/

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող մնացած սովորողները /հենաշարժողական և ֆիզիկական այլ խնդիրներ ունեցող/ հայոց լեզվի քննությունը իրենց ընտրությամբ կարող են հանձնել իրենց դպրոցում կամ կենտրոնացված՝ իրենց կարիքին համապատասխան հարմարեցումների ապահովմամբ: /http://www.irtek.am/views/act.aspx?aid=65827, կետ 19/